

Մեծ դէպքը պատահեցաւ անակնկալօրէն ու կտրմեց զարձակէա մը Մանկապարտէզի կիանքին մէջ: Իրիկուն մը նոր որբեր բերին, ազտոտ, արժ-  
 զոյն, պատուած հազուադէպով ազոց բազմութիւն մը: Մեզ շարեցին չորս-  
 չորս, հասակի կարգով, ու ճիշդ կէտէն կտրեցին շարքը: Պոչը մնաց Մանկա-  
 պարտէզ, իսկ մեծերուն յայտարարուեցաւ, թէ պիտի մեկնին ուրիշ շէնք մը,  
 տեղ բանալու համար նորեկներուն:

Ծաղկեցինք անկողինները ու դացինք մեր նոր տունը, ուր կային արդէն  
 ուրիշներ, մեզմէ աւելի հասակաւոր տղաք: Այդ շէնքը կը կոչուէր Ծաղկոց եւ  
 փոխանցման կայան մըն էր Մանկապարտէզին եւ մեծ ազոց բաժիններուն մի-  
 ջել: Ծաղկոցին բնակիչ դառնալու հանգամանքը, ինքնաբերաբար կը բաժնէր  
 մեզ Մանկապարտէզէն, մէկ օրուան մէջ մեծցնելով մեր տարիքն ու հասակը:  
 Բակը պղտիկ էր, բայց ընդարձակ սենեակներ կային: Երեսուն քառասուն հոգի  
 հանգիստ տեղաւորուեցանք ամէն մէկ սենեակի մէջ, առանց խճուղումի: Հի-  
 ները, որոնք մասամբ դպրոցականներ էին, գրաւած էին վերնաշարիկ լաւա-  
 գոյն երեք սենեակները: Նախընտրելի էր անշուշտ վերը պառկիլ, բայց մեր  
 բոլոր փորձերը անյաջող անցան ու չկրցանք թափանցում կատարել անոնց  
 կալուածէն ներս:

Շուտով հասկցուեցաւ, թէ Ծաղկոցը մեզի համար պիտի ըլլայ ազա-  
 տութեան օրրան մը: Մայրիկ մը ունէինք, որ ցերեկը կը մնար Ծաղկոցին  
 մէջ, բայց դիշերը կ'երթար իր տունը: Հսկիչները չունէին Մանկապարտէզի  
 հսկիչներուն իստութիւնը, ոչ ալ հեղինակութիւնը: Ճաշի եւ քնանալու զան-  
 դակները կը պարնուէին, կարծես, յարգելու համար ձեւականութիւնը: Հսկիչ-  
 ները կ'երթային դպրոցականներուն հետ, ու ամբողջ օրը ազատ էինք: Բակին  
 պղտիկութեան պատճառով արտօնուած էինք խաղալու դուրսը, մեր առջևի  
 փողոցին մէջ: Կարճատեւ շրջան մը տեւեց ազատութիւնը, հազիւ քանի մը ա-  
 միս: Յետոյ փոխուեցաւ Ծաղկոցին շէնքը, նաեւ վարչաձեւը: Բայց այդ կարճ  
 ժամանակը բաւեց, որ անիշխանութեան սերմերը առատօրէն ծլարձակին մեր  
 մէջ, եւ անկարգապահութեան ճաշակը այլեւս անբոժան ըլլայ մեզմէ, որբա-  
 նոցի ամբողջ տեւողութեան, եւ ոմանց համար, նաեւ իրենց ամբողջ կեանքի  
 ընթացքին...:

Նախ վար առինք Ծաղկոցի պատուհաններուն բոլոր ապակիները: Երկ-  
 բորդ օրը կարգը հասաւ շրջակայ փողոցներու թաղապետական լապտերներուն:  
 Ճշգրիտ նշանաւորութիւններով, քուրչէ մեր ծանր ղնդակները վերջ տուին թա-  
 դին լուսաւորութեան: Վարանումով, վախով՝ բայց հետզհետէ ընդարձակե-  
 ցինք գործունէութեան մեր սահմանները ու բնական դարձաւ այլեւս շրջիլ  
 բողոքին մէջ եւ վերադառնալ ճաշի պահերուն:

Մէջտեղ ելան արշաւախումբեր, որոնք կազմակերպուած դործունէու-  
 թեամբ եւ շահակցական ընկերութիւններու հիմունքով Ծաղկոց կը բերէին  
 քաղաքին հեռաւոր մասերէն «գտնուած» առարկաներ ու կը ծախէին միւսնե-  
 րուն: Ամենէն գործունէայ եւ զօրաւոր խումբը Չեչոտ Կարպիսինն էր: Կա-  
 տարեալ հրօսախումբ մը, որ մինչեւ կայարան կը հասնէր եւ զինուորական

վրաններէն ու զօրանոցէն ձեռք կ'անցնէր թիթեղէ տուփերով պահածոյ միս, ձուկ, անուշեղէն, ամենիւի շերտ, շապիկ, դուլլոյ, եւ մանաւանդ, սպունդի պէս ծակ-ծակ բայց շատ ճերմակ հացեր, ահագին մեծութեամբ: Իրենց ասորունքը գոլրոցականներուն կը ծախէին զիրքով: Գիրքերը կը ծախէին գրաւթաճառին՝ դրամով: Գրամը կը պահէին: Շատ մը գոլրոցականներու պայուսակները այսպէս պարսպուեցան լեցնելով Կարպիսի եւ ընկերներուն գրգանները մեծ ու պղտիկ պարզութեամբ: Կարպիսին խանութք առեւտուր կ'ընէր նոյնիսկ հսկիչներուն եւ Մայրիկին հետ:

Կային ուրիշ խումբեր ալ, ըսյց ոչ մէկը կը հասնէր Կարպիսին տղոց բարպաւածութեան: Մեր խումբը մանաւանդ, միշտ կը դառնար ճղճիմ արդիւնքով: Օր մը հասանք մինչեւ կայարանին շրջակայքը, որ զինուորներուն տեղն էր: Կը կարծէինք, թէ դժուարը հոն հասնիլն էր եւ անգամ մը վրաններուն մօտենալէ ետք, ամէն բան առատ պիտի գտնէինք մեր առջեւ: Մնացինք ձեռնուռայն: Փշաթելիքու ցանկապատ մը կար, որմէ ներս երբեք չհոտարձակեցանք մտնել: Ժամերով թափառեցանք փշաթելիքուն քով: Ամէն կողմ թիթեղէ պարապ տուփեր, բանջարեղէնի մնացորդներ եւ աղբիւս: Շնորհիւ Պեարոսին, մասամբ արդիւնաւորուեցաւ սակայն մեր յանդուրձան ճամբորդութիւնը: Թիթեղէ տուփերէն շատերուն՝ մնացած էին բանալիները: Պեարոս յայտնեց, թէ ատոնք արժէք ունին եւ քսան հատը կրնանք ծախել մէկ պարզութի:

Սկսանք տենդապին բանալիներ փնտռել եւ հաւաքել: Երբեմն թիթեղին բացուած շերտը շատ ամուր ոլորուած կ'ըլլար բանալիին վրայ, դժուարութեամբ կը քակէինք ամուր ոլորները եւ մեր մտտերը կ'արիւնէին սրածայր թիթեղներէն, բայց կարեւորութիւն չէինք տար: Հարիւրաւոր բանալիներ հաւաքեցինք աղբակոյտերուն մէջէն, շարեցինք թելի մը վրայ եւ ինկանք շուկաները: Ոչ ոք ուղեց գնել: Ոմանք կը մերժէին անտարբերութեամբ, ուրիշներ կը վճարէին: Արդէն խանութպաններուն համար քաղաքին մէջ վիտայոյ որբերուն տեսքը անհաճոյ էր ամբան ճանճերուն պէս, յաճախ աւելի նեղացուցիչ եւ վտանգաւոր: Ի վերջոյ յաջողեցանք ծախել մեր բանալիները մէկ օխտ վարունգով:

Դէպի որբանոց դարձի մեր ճամբուն վրայ հանդիպեցանք Կարպիսինց խումբին ու սպասահարար ականատես եղանք անոնց յիշատակիլի մէկ սխրագործութեան: Հիացումով ու սոսկումով սորվեցանք այդ օր Կարպիսի եւ ընկերներուն գործունէութեան գաղտնիքը: Մեր աչքերով տեսանք, թէ որքա՞ն սուղ կը վճարէին անոնք իրենց խանութին ճոխութիւնը: Ռազմավարութիւնը հետեւեալն էր. — Կարպիս երկու-երեք ընկերներով յարձակում կը գործէր միակ կէտի մը վրայ, ընդհանրապէս մէկուսի խանութ մը: Ամէն մէկը բան մը խլելով խոյս կու տար ասորեր ուղղութեամբ: Պանութպանը ստիպուած էր հետապնդել մէկը միայն, լքելով միւսները, որոնք կը յաջողէին անհետանալ իրենց գողոններով: Հալածուողը կրնար բռնուիլ, ծեծուիլ, գողցածը կորսնցրնել, բայց ատիկա նշանակութիւն չունէր իրեն համար: Գիտեր, թէ ազատուած ընկերները երբեք պիտի չփորձեն իւրացնել իր բաժինը: Մէկը բոլորին եւ բոլորը մէկին համար: Կարպիսին խումբը տառացիօրէն կը գործադրէր այս գեղեցիկ սկզբունքը, ամենէն տղեղ գործունէութեան մէջ իսկ...

Այդ օրուան յարձակումը գործուեցաւ որբանոցին մօտիկ շուկային մէջ, ծայրի նպարավաճառին վրայ: Մենք ոչ միայն կրցանք դիտել մօտէն, այլեւ դեր մը վիճակուեցաւ մեր խումբին: Սկիւմայ կատարեցինք հետսապահի պար-

տականութիւնը, օղնելով հերթական արկածեալին: Կարպիս եւ իր երեք ընկերները կայծակի արագութեամբ ինկան խանութին վրայ ու նահանջեցին նոյն թափով: Ըստ սովորութեան ամէն մէկը բռնեց միւսին ներհակ ուղղութիւն մը: Գործողութեան վայրը քառուղիի մը բերանն էր ու մեծապէս կը նպաստէր կարպիսին ուղղափոխական ծրարքին: Խանութպանը, յաղթանդամ արար երկատարդ մը, ինկաւ Սիսակին ետեւէն, որ կը վազէր մեր կողմը: Որոշ էր, թէ Սիսակ պիտի բռնուէր: Ձեռքերուն մէջ խոշոր կոյտ մը արմաւ կար, որ կ'արգելէր՝ իր աղաս վազը: Արարը կը մօտենար հայհոյելով, եւ ձեռքի կշիռքը շարժելով: Սիսակ նետեց արմաւը, թափ առաւ, բայց չկրցաւ հեռուն երթալ: Խանութպանը հասած էր: Երկաթէ կշիռքին թելով քաղմաթիւ հարուածներ իջան, Սիսակ սկսաւ լալ, պաղատիլ, ոռնալ: Անօգուտ: Սոսկալի ծեծ մը կերաւ: Մարդը յետոյ հաւաքեց քիչ մը անդին ինկած արմաւը եւ դնաց իր խանութը:

Արար միւս խանութպանները չեզոք դիտողի դերք մը պահեցին, Սիսակին խոշտանդուած պահուն: Բայց միւսին մեկնումէն ետք, երբ տեսան արիւնլուայ վիճակը, շրջապատեցին Սիսակը՝ նա՛ հարամ, նա՛ հարամ, բացականչութիւններով: Օղնեցին մեղի, որ շալկենք Սիսակը եւ բերենք տուն, մեծ դժուարութեամբ: Իրիկունը հիւանդանոց տարուեցաւ Սիսակ: Մէկ ոտքը շախմատուած էր: Հիւանդանոցէն ելլելէն ետք ալ, դեռ երկարատեւ անթացուկերով կը քալէր:

Այս դէպքին պատճառաւ, Մազկոցի ազատութիւնները մասամբ կաշկանդուեցան: Գոնասպան մը դրին, դուրս ելլելը արգելեցին, բայց անօգուտ: Բարի եւ անճարակ ծերուկ մըն էր դոնասպանը: Որեւէ ձեռով կը յաջողէինք սիրտը շահիլ եւ դուրս ելլել:

Թութի եղանակն էր: Հոսանք մը կար Մազկոցին մէջ, առտուն կանուխ պարտէզները երթալու: Պզտիկ պարզուտ մը կու տայինք պարտիզպանին, երկու հոգիի համար, եւ ազատօրէն կը բարձրանայինք մեր ուղած թութին ծառը: Կրնայինք ուտել այնքան, որքան որ կարելի էր, բայց իրատունք չունէինք հետերնիս թութ տանելու: Մեզմէ մաս մը կը մտնէր պարտէզ, վճարելով: Միւսները կը սպասէին դուրսը եւ յարմար բոսէին կը յաջողէին սարդիլ ներս եւ շուլուիլ ծառէ մը վեր: Պարտիզպանները առհասարակ բարեհաջակամ էին: Կը բաւէր, որ քանի մը հոգի վճարող գտնուէր: Աչք կը գոցէին միւսներուն:

Օր մը սակայն մեծ խումբով մտանք պարտէզ մը: Պարտիզպանը մէջտեղ չկար: Ամէն մէկս ծառի մը վրայ, լուռ եւ դողունի, արագ-արագ կը լափէինք մեղրահամ թութերը: Քանի մը դարոցականներ կային մեղի հետ, մեծերէն: Բաւական տեւեց մեր ազատ վայելքը: Վերջապէս հեռուէն երեւցաւ պարտիզպանը պոռչտուքներով. մենք յաջողեցանք փախուստ տալ առանց բռնուելու: Բայց կարդ մը ձախողութիւններ պատճառ դարձան, որ նոյն օրն իսկ Հայրիկը Մազկոց այցելէ եւ ծանրակշիռ դէպքերով լեցուն մթնոլորտի մը մէջ, վերջ դրուի թութի արշաւներուն:

Քովի պարտէզը մտնող խումբէն Խլոտ Արրահամին աչքին քար մը դիպած էր փախուստի ատին: Վիրաւորուած էր նաեւ ոտքը, պատէն ցատկած պահուն: Ոտքը բուժուեցաւ, բայց մէկ աչքը կոյր մնաց: Մեր խումբէն, դպրոցական Յարութիւնը, աճապարանքին մէջ պայուսակը մոռցած էր ծառին տակ մտնէն դեղեցիկ պայուսակն էր իրը, դիրքերով եւ տեսարակներով լեցուն: Հայրիկը երբ հիւանդանոցէն Մազկոց եկաւ, բոյորս ու հասկցանք

անմիջապես, թէ անսովոր բան մը պիտի պատահի: Երբեք այդպէս դայրա-  
ցած չէինք տեսած Հայրիկը: Որոշ էր, թէ Աբրահամին վիճակն էր գլխաւոր  
պատճառը իր դայրոյթին: Քննութիւն մը բացաւ, ճշդեց պարտեզ մտնողնե-  
րը: Ու երբ յայտնի եղաւ, թէ Յարութիւն պայուսակը հոն թողած է, մոռցաւ  
մեզ ու կատաղութիւնը թափեց անոր վրայ: Ձէինք տեսած Հայրիկին ծեծելը:  
Չտեսանք նաև այն օրէն յետոյ: Բայց ինչ որ պատահեցաւ Յարութիւնին,  
բուեց, որ հասկնանք ըտլորս ալ, թէ Հայրիկին մտրակը պարզ խաղալիք մը  
չէ իր ձեռքին մէջ:

Երկու հսկիչները անշարժացուցին Յարութիւնը, ձեռքերէն ու սուքե-  
րէն: Հայրիկը սկսաւ հարուածել մէջքին ու յետոյքին, երբեմն կանդ առնե-  
լով, բայց կրկին հարուածելով, առանց մեղմացնելու ծեծին սաստկութիւ-  
նը: Այնքան ծեծ կերաւ Յարութիւն, որ Հայրիկին մեկնումէն ետք չկրցաւ  
բարձրանալ վերնաշարիկի իր սենեակը ու քաշկոտուեցաւ մեր քով:

Անկողինները փոկեցինք եւ այդ ծանր օրուան խոնջեցիկն եւ տխրու-  
թեան ճնշումով, սկսանք պառկել: Յարութիւն երկնցած էր լո՛ւ անկողնիս  
քով, գետնը: Պառկած էր փորին վրայ, թիւերը գլխուն տակ բարձ ըրած,  
եւ կու լար:

Անտանելիօրէն տաք դիշեր մըն էր: Քունս չէր դար: Մլուկներու եւ  
քրտինքի մէջ, տեսարար կը գտնայի աջ ու ձախ, ժամեր շարունակ, ըայց  
չէի յաջողեր քնանալ: Յարութիւն այլեւս չէր լար, բայց կը պահէր նոյն  
դիրքը: Ոո՞ղ Յովհաննէսը սկսած էր խոկալ: Կը նշանակէր՝ թէ այլեւս ար-  
թուն մարդ չկար սենեակին մէջ: Եթէ գանգակը պառկելու ազդանշանն էր,  
Յովհաննէսին խոկոցը ապացոյցը կարելի էր նկատել, թէ սենեակը քունի  
մէջ է: Այդ ազան բոլոր սենեակներէն քշուած էր խոկոցին համար ու ինկած էր  
մեր սենեակը: Եթէ փորձուէր ուրիշներէն առաջ քնանալ, արթուն եղողները  
կը ձայնէին.

- Ոո՞ղը սկսաւ...
- Բարձը իջեցուր...
- Չուր թափեցէք...

Այնքան շարժարած էին խեղճը, որ վախէն կը սպասէր, որ միւսները  
քնանան, որպէսզի այլեւս դինք նեղող չըլլայ: Համետ եւ լաւ տղայ մըն էր  
Յովհաննէս ու խոզը յիշեցնող որեւէ բան չունէր վրան: Հաւանաբար այդ  
մակդիրը արուած էր իրեն, խոկալուն համար:

- Յարութիւն իր տեղն էր գետ, ինձմէ երկու թիզ անդին: Չայն տուի.
- Անդրանիկ արթո՞ւն ես...
- Արթուն եմ...
- Կը ցաւի՞...

Պատասխանի փոխարէն շարժեց սրունքները, ձեռքը ետ տարաւ եւ  
տքայով ետ քաշեց: Քանի մը անգամ «ա՛խ» ըրաւ, փորձեց շտկուիլ, բայց  
չկրցաւ: Յայտնապէս ցաւերը արգելք էին նստելուն:

Յարութիւն քանի մը տարիով մեծ էր ինձմէ: Հայրենակիցներ էինք եւ  
իրարու «աղբարիկ» կ'ըսէինք: Երբ դպրոցէն դար, պայուսակը կը յանձնէր  
ինձի ու ես տղատ էի դիտելու գիրքերու պատկերները: Օր մը տեսարակ մը  
տուաւ ինձի, սրուն մէջ դունաւոր մատիտով շատ մը պատկերներ գծած էր,  
մասնաւորաբար կտմաւոր հայ զինուորներ, ճիւղաւոր դիւարիներով:

Գիշերը կը յառաջանար Ոո՞ղ Յովհաննէսին խոկոցին կշռոյթով: Նըս-

տած էի Յարութիւնին քով, բայց չէինք խօսեր: Բան մը ըսած ըլլալու համար, հարցուցի.

— Ձուր կ'ուզե՞ս, աղբարիկ...

— Կ'ուզեմ...

Գացի ջուր բերի խոհանոցէն, խմեց: Սալոր ունէի, տուի, կերաւ: Վերմակիս մէկ ծայրը նետեցի վրան, թէեւ տաք էր: Չբողոքեց: Այդպէս քնացանք այդ գիշեր:

Առտուն, Հայրիկին կողմէ հսկիչ մը դրամ տարաւ պարտիզպանին, բայց պայուսակը չզտնուեցաւ: Յարութիւն քանի մը օր նստելու դժուարութիւն կրեց եւ այլեւս դպրոց չգնաց: Գիրք չառաւ ձեռքը, նոյնիսկ որբանոցէն ետք: Մնաց անզբաղէտ եւ անուս: Գիրքի փոխարէն միշտ մատիտ-տետրակ կար ձեռքը ու կը գծէր: Կամաւոր պինուորներուն տեղ, հիմա իր գլխաւոր նիւթն էր Հայրիկը: Կախուած մարդ մը դժած էր, որուն վրուխը Հայրիկին կը նմանէր: Էջ մը՝ Հայրիկին գլուխով: Մտրակով ծեծուող մարդ մը կար ուրիշ էջի մը վրայ: Մեծողը ինք չէր՝ բայց ծեծուողը Հայրիկն էր: Ուրիշ տեղ մը կոտորներ դրած էր Հայրիկին գլխուն, պոչ մը, կուզ մը շինած էր կռնակին վրայ: Յարութիւն կը յաջողէր պարմանալի նմանութիւն մը տալ իր դժած պատկերներուն: Գծագրութիւնը դարձած էր առօրեայ իր միակ գրադումը: Տասը տարեկանին յայտնի էր արդէն, թէ ուժեղ բան մը կը խլրաի իր մէջ, որովհետեւ այդ մանչուկը կոչուած էր ըլլալու Կալենց նկարիչը:

## 1.— ՅԱՐՈՒԹԻՒՆ ԿԱԼԵՆՑ

Աքսորի ճամբաներուն՝ կորսնցնել հայր ու մայր, որբանոցներու խոնաւ յատակին՝ բանալ գիտակցութիւնը կեանքին դէմ, ու որբ՝ իյնալ փողոցներու խամրեցնող տենդին մէջ, կտոր մը հացի, ճառագայթ մը լոյսի, գիրկ մը սիրոյ համար — ահա՛ մանկութիւնը այս տղուն, որ կը կոչուի Յարութիւն Կալենց: Նկարիչ մը: Ճշմարիտ, տաղանդաւոր նկարիչ մը, անվիճելիօրէն:

Անոնցմէ, որոնց խանձարուրին վրայ հրեշտակները անտեսանելի նշան մը կ'ընեն, որպէսդի մահէն ետք, հողեզէն պատեսանէն բան մը մնայ հողէն գուրս, ժամանակին մէջ...

\*\*

Կալենց — Հայացումը Խորմանտայիան մականունին — Մնած է Կիւրին, 1908-ին: Նախնական ուսումը, որ դժբախտաբար անհաւատալիօրէն նախնական մնաց ու կը մնայ դեռ, առած է Հալէպի Հայկազեան Վարժարանին մէջ, ուր կը յաճախէր որբանոցէն:

Կը յիշեմ, թէ թիղ մը պակաս մեր հասակին պատճառով կարժիր դողնոցի դատապարտուած փոքրերս, ի՞նչ յարզանքով ու ծածուկ նախանձով կը դիտէինք մեծերու խմբակը, որ ամէն առաւօտ դիրքերը շալկած կ'երթար վարժարան: Յարութիւն կը պատկանէր երանեալ այդ խումբին, կաշիէ հաստափոր պայուսակը թեւին տակ: Այդ պայուսակը դեր մը ունեցաւ Կալենցի կեանքին մէջ: Ճակատազրական զեր մը:

Աժառնային պայծառ ստաւօտ մը, Յարութիւն դպրոցին ճամբան կը

չփութէ պարտէզները տանող ճամբուն հետ: Կը սողոսկի ցանկապատէ մը ներս, պայուսակը կը նետէ ծառի մը տակ ու կը մագլցի թթենիի մը կտուարը: Բայց, չար բախար, մահակը ձեռքին, կու գայ վերջ գնել այս մեղրածոր վայելքին, կատողած պարտիզպանի մը կերպարանքով: Յարութիւն հապիւ կը յաջողէ ճաշարիւ ու կծիկը դնել: Պայուսակը կը մնայ հոն, ծառին տակ...: Նախակրթարանի երկրորդ կամ երրորդ կարգէն անդին, Յարութիւն դպրոց չտեսաւ ու չփնտռեց: Իր փնտաածը՝ դոյութիւն չունէր գիրքերուն մէջ: Աւելորդ դասու ուսումը, ներսէն բարձրացող գիծերու եւ գոյներու բանաստեղծութեան համար:

\*\*\*

Որբանոցէն դուրս, իր կեանքը եղաւ թափառումներու եւ որոնումներու անվերջանալի շարք մը, գիւղէ գիւղ, քաղաքէ քաղաք, միշտ ի խնդիր պատառ մը հայել: Բայց, ուր որ գնաց, նիւթական ինչ պայմաններու մէջ ու որ ինչու, մատիւն ու երանդապնակը անրաժան եղան իրմէ: Եուկան, մայթերուն վրայ, պագարին մէջ, ամէն տեղ ուր ուշադրաւ գոյներ կային կամ տիպարներ, այլ մանաւանդ շարժում ու կենդանութիւն՝ հոն էր կալենց: Աշխարհներուն առջեւ իրար բղիտող բազմութիւնը, բնուն տակ հեւացող էջ մը, գնդիկ խաղացող լաճեր՝ իր սիրական նիւթերն էին:

Աստիճանարար, մատուրը փոխուեցաւ վրձինի եւ ատեն մը վերջ, ջրաներկը իւղաներկի: Այլեւս չբնապատը սկսած էր հաշուի առնել զինք իբրեւ նկարիչ: Ծանօթ արուեստագէտներ Եղիա Գասպարեան եւ Օննիկ Աւետիսեան, որ կարճ ատեն մը Հալէպ մնացին, խանդավառ հիացումի եւ դուրսդուրսնքի առարկայ դարձուցին պատանի կալենցը, անոր մէջ տեսնելով ազադայ մեծ նկարիչը: Աւետիսեան փորձեց նոյնիսկ մարդակազմութեան դասեր տալ, բայց հաղիւ յաջողեցաւ բացատրել Գլուխը: Մարդկային մարմնին մնացեալ մասերը մնացին հոն՝ ուր մնացած էր պայուսակը: Յարութիւն՝ սորվիլ չէր սիրեր:

\*\*\*

Տարիները շարունակեցին սահել: Կալենց շարունակեց նկարել: Հիմա, նկարչութիւնը իրեն համար կոչում մը, կրօնք մը ըլլալէ ետք, դարձած էր նաեւ տպրուստի միակ միջոցը: Պաշտօնապէս եւ ասպարէզով՝ նկարիչ էր այլեւս: Հալէպը դասու չոր՝ ու մեկնեցաւ Թրիփոլի: Թրիփոլին դասու պլոտիկ՝ ու անցաւ Պէյրութ: Հոն, կարճ ատենէն, շրջապատուեցաւ հիացող աշակերտներու խումբով մը: Ինք, որ երբեք չէր ուղած սորվիլ, սկսաւ սորվեցնել: Գէշ աշակերտը եղաւ լաւ ուսուցիչ մը: Պէյրութ հաստատուած եւրոպացի նկարիչներ, իրենց վկայականները, թանգարանէ թանգարան, մայրաքաղաքէ մայրաքաղաք թափառումներով ձեռք բերուած արուեստի պաշարը, համարուր եւ նոյնիսկ իրենց պատկանելի տարիքը արդեւ չնկատեցին՝ այս «Որբանոցի տղան» նկատելու իրենց հաւասար նկարիչ մը:

Արուեստագէտները՝ ճանչցան ու դնահատեցին կալենցի տաղանդը, բայց յաջողութիւնը — նիւթականը — ուրաջաւ գլինք: Միջակութիւնները հրապարակի վրայ համարու շինեցին եւ գրպաններուն մէջ՝ դրամ: Որովհետեւ, յաջողելու համար, անհրաժեշտ էր ճարտիկ ըլլալ ու Յարութիւն ճարտիկ չէր: հարկ էր լեզու գիտնալ ու Յարութիւն լեզու չունէր: Պէտք էր գիշ





Գործ՝ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԿԱԼԵՆՅԻ

608 bis

մը հանդուրժող, քիչ մը համեստ ըլլալ ու Յարութիւն ապերասան խառնուածք մը միայն ունէր: Իսկ յաջողութիւնը, համբաւը եւ դրամը իրեն համար այնքան արժէք ունէին, որքան ծառին տակ մնացած պայուսակը...

1939-ին, բացուեցաւ Նիւ Եորքի ցուցահանդէսը: Լիբանանեան տաղաւարին տնօրէնը, բանաստեղծ Ծարլ Բօրմ, ծրարած էր շարք մը քանդակներով ներկայացնել Լիբանանի դիւզական կեանքը եւ ձեռնհաս արուեստադէտներուն էոջ կ'ընէր, որ իրենց տաղանդը չխնայեն Լիբանանի վարկին: Ոչ ոք համարձակեցաւ ստանձնել ապսպրանքը: Կարճ ժամանակ մը միայն արտադրուած էր. ու յետոյ, աշխարհին ծանօթ էր բանաստեղծ Բօրմի դժուարահաս ըծարնդրութիւնը:

Առտու մը, Կալենց մտաւ Քօրմի զրասնեակը եւ յայտարարեց՝ թէ պատրաստ է ուղուած քանդակները ուղուած ժամանակին հասցնելու: Անելի մատնուած բանաստեղծը, թերահատա՛ բայց ուղեց փորձ մը ընել եւ մանր նմոյշ մը պահանջեց Կալենցէն: Արդիւնքէն՝ մնաց ափ ի բերան: Քանդակները պատրաստուեցան, բնական մեծութեամբ, եւ զրկուեցան Նիւ Եորք:

Ցուցահանդէսին նուիրուած հսկայ հատորը (Պուէ ֆի Նէյշընս) կը խօսի «Լիբանանցի արուեստագէտի մը հոյակապ քանդակներուն մասին...»:

Այդ քանդակները՝ մեկնակէտը եղան իր թռիչքին: Արաբական եւ Ֆրանսական մամուլը սկսաւ սիւնակներ նուիրել իրեն: Հասկողներ սկսան վնասել իր նկարները եւ վերջապէս՝ ամուր, վաւերական համբաւ մը պարտադրեց իր անունը Լիբանանի նկարչական աշխարհին:

\*\*

Հիմա, Պէյրութի հեռաւոր մէկ թաղին մէջ, իր աշխատանոցը — միշտ համեստ ու միշտ սրբանոցային — փոթորիկներէն քշուած նաւու մը պէս ինկած է ժայռի մը վրայ, ծովուն, երկինքին ու լեռներուն դէմ մեծարաց փեղկերով: Ներսը, աննկարագրելի խառնակութեան ու ահաւոր թափթիւածութեան մէջտեղ, եռտասնի մը վրայ կը հանդչի կիտաւարտ նկար մը: Վերջինը — ահա Կալենցի միակ դուրդուրանքը, միակ մասսեւեռումը, միակ կեանքը: Միւսները, կրնան նետուիլ որեւէ անկիւն, որեւէ մահճակալի տակ կամ որեւէ սեղանի վրայ: Կարեւորը՝ վերջինն է, վրձինին տակ մարմնաւորուող ներկան, որուն վրայ հարկ է թափել տաղանդին հետ նաեւ ամբողջ սէրը, հողածութիւնը, մինչեւ... ասարտիլը: Անկէ վերջ, միշտ կարելի է դորձը մոռնալ որեւէ անկիւն...

Առասպելական է իր ծուլութիւնը: Արուեստագէտի ծուլութիւն սակայն, որ կը սպասէ ներշնչումին՝ վերածուելու համար ստեղծագործ տենդի: Վախնալով որ չեն հասկնար այս պարտզան, պէտք կը տեսնէ արդարացուցիչ բացատրութեան մը.

— Ես ծոյլ չեմ: Գիշերներ եղած են, որ հազիւ Յ—ձ ժամ քուն տեսած են աչքերս: Բա՛յց... այսպէս, ամէն օր որոշ ժամերու աշխատել անդայման, միշտ անկարելի թուած է ինծի: Կը հասկնաս, չէ՞...

— Կը հասկնամ, երանելի՛, շատ լաւ կը հասկնամ...

\*\*

Ի դուր պիտի փորձէր Կալենցի դործերուն մէջ փնտռել ուղղութիւն մը, դպրոցի մը հետքը: Իր դպրոցը՝ դպրոց չունենալն է: Ուղղութիւնը՝ ծանօթ ամէն ուղիէ խուսափելը: Թէքնիքը՝ ի՛ր թէքնիքը, դոր չի պարտիր ոչ մէկ



վարպետի: Եւ սակայն, հակառակ նկարչութեան նախատարերքն իսկ ուսած ըլլալուն, կրցած է հասնիլ անդ մը, որ իր արուեստը մօտեցած ըլլալ կը թուի բիւրեղացումի վերջնական կերպին: Ապացոյց՝ իր ծաղիկները: Այս տարի, ծաղիկներու տարին է Կալենցի: Աւելի ճիշդ՝ վարդերուն, որոնք յափըշտակուած են տասնեակներով եւ այլեւս կը կազմեն մնայուն դարդը՝ Լիբանանի ամենէն ազնուական ու մեծափարթամ դահլիճներուն:

Կալենցի վարդերը բոլոր սենին եւ դարհանային առաւօտներուն ցօղր՝ իրենց փերթերուն վրայ:

Հիմա, հասուն, փնտռուած ու յարզուած նկարիչ մըն է մեր Յարութիւնը: Ու իր ստղանդին որպէս դերազոյն մեծարանք, իր գործերը կը գնահատուին ու կը գնահատուին աւելի շատ... ՆԿԱՄԻՉՆԵՐԷ, քան պարզ արուեստասէրներէ: Այս միակ պարագան կը բաւէ ինքնին, հաստատելու Կալենցի վրոճինն վայրի շնորհը, վաւերական արժէքին հետ:

\*\*

Աշխատանոցէն դուրս, կամովին իրենց անձն ու գործը մոռնալ ուզող երկու դատարկասրտներու պէս, կը թափառինք փողոցներու մէջ: Կը խօսինք մեր հոգեբէն, ուրախութիւններէն, ծրարելոյններէն: Կը խօսինք այնպէս՝ ինչպէս կրնան խօսիլ Որբանոցի սրազ քարերուն յիշատակը քսան տարի յետոյ ու գեկոչող երկու որբեր միայն... Կալենց կը շարունակէ պատգամել ամէն բանի, եւ, նոյնիսկ... արուեստի մասին: Ու յանկարծ՝

— Գիտե՞ս, շատ մը նկարիչներ կան հիմա, որ կ'ուզեն մօտեան արուեստին հետեւիլ եւ ինչե՛ր կը դժեն, ինչե՛ր...

— Գուն արդիական գործերը չե՞ս սիրեր:

— Ընդհակառակը: Մօտեան արուեստը միայն է, որուն համար կ'արժէ աշխատիլ: Բայց նորութիւնը՝ պէտք չէ կարծել թէ այնպիսի թիւն կը նշանակէ: Ամէն նկարիչ մեծագոյն նորութիւնը տուած կ'ըլլայ՝ եթէ յաջողի տալ ինքզինքը...

Հապա՞: Այսքան բան՝ ստիպած է արգէն Կալենց: Եւ դեռ պնդողներ կան, թէ մնացած է անս'ւս, անդրադէտ: «Տա՛լ ինքզինքը»... Ակադեմական տա՛սը քարոզ ու դասախօսութիւն կ'արժէ արուեստի այս «համեստ» բժրունուող, սիրելի՛ Կալենց:

Վերջին պոռթկում մը ունի, բաժնուելէ առաջ.

— Հիմա՛ գրամ կը շահիմ. լաւ է: Հիմա՛ քիչ մը կը յարգեն դիս ու բանի մը անդ կը գնեն վերջապէս. լաւ է: Հիմա՛ աւելի գեղեցիկ նկարներ կը յաջողիմ. լաւ է, լաւ է: Բա՛յց... ին'րն անիծեմ այս բոլորին, եթէ...

Շարունակելու պէտք չունի: Գիտեմ իր մեծ երազը: Ի՛մ երազս, Բոլորին երազը: Հայաստան:

Հայաստանը՝ Կալենցի համար պարզ հայրենիք մը չէ, աշխարհադրական ու տնտեսական ըմբռնում մը չէ միայն, այլ արուեստի զաղաթ մը, անմերձենալի Բացարձակը, որուն հասնելու ձգտումը իր մէջ տարիներէ՛ ի վեր կ'ելի ու կը քայլի...

— Բայց, գիտցի՛ր, որ հիմա Հայաստանի մէջ արդիւնուած է... անդրապոռթկելը, կ'աւելցնեմ փոխելու համար իր մոայլ կարօտին տխրութիւնը: Եթէ հոն ըլլաւ, ոստիկան մը ականջէդ բռնած պիտի տանի շիտակ... դպրոց.

պիտի ստիպուիս, քսաներկու տարի վերջ, փնտուել թթենիին տակ նետած պա-  
յուսակդ...

— Հոգ չէ՛, կ'առնեմ, կը սորվիմ...

Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ թէ կորուսեալ Հայրենիքին հասնելու հա-  
մար մեր բոլորիս բնեւիք զոհողութիւններուն մէջէն՝ դերագոյնը պիտի ըլլայ  
կալենցի այս «կը սորվիմ»ը...

Կալենց: Յարութի՛ւն Կալենց: Լաւ միտք պահեցէք այս անունը: Օր մը  
իր ձայնը պիտի գայ հեռուներէն, շա՛տ հեռուներէն ու բարձրէն...

Ա. ԾԱՌՈՒԿԵԱՆ

## 2.— ԿԱԼԵՆՑԻ ԵՐԳԸ

Կեանքի ու բնութեան մէջ կը հանդիպինք երեւոյթներու, որոնք ան-  
ջնջելի աղաւորութիւն կը թողուն մեր վրայ: Այդ արդիւնքն է մեր ներքին,  
զգացական աշխարհին ու անտեսանելի իրականութեան հարադատ բախշու-  
մին: Արուեստի հոգեհարսդատ երկը նոյն ձեւով կը գրողմուի ու կ'ապրի  
մարդուն մէջ:

Հանրասոցիալական ցուցահանդէսներուն՝ դեղանկարիչ Յարութիւն  
Կալենցի կտաւներ, շատ անգամներ այդպէս են ներդրածեր մեր վրայ: Թե-  
րեւս այս իսկ պատճառով պէտք է բացատրել անոր գործերը ի մի հաւաքուած  
տեսներու արուեստադէտներուն վաղեմի ցանկութիւնը:

Եւ ահա, սիրելի նկարիչին մահէն չորս տարի յետոյ, անոր ծննդեան  
60-ամեակին առթիւ, Հայաստանի նկարչի տան երկու բնդարձակ դահլիճնե-  
րուն մէջ բացուեցաւ անոր անհատական պատկերահանդէսը, որ կարելի է  
ամբողջական համարել: Այդտեղ ներկայացուած էր շուրջ երկու հարիւր  
դործ՝ գծանկարներ, ջրաներկեր, գեղանկարներ, որոնց զգալի մասը հաւա-  
քուած է Սովետական Միութեան զանազան քաղաքներէն:

Արուեստի ճշմարիտ երկը իր ստեղծագործական ընթացքին մէջ մարդ-  
կային ներքին ապրուած յոյզերու հայելին է: Կալենցի աշխատանքները դի-  
տելու ժամանակ այս միտքը անբաժան է մեզմէ: Իր լուսադոյն կտաւներուն  
մէջ, Կալենցը մեզ կը ներկայանայ իր տաղանդին բովանդակ վառով:

Յուցահանդէսին, այցելուներու առաջինը «կ'ողջունէր» Կալենցի վեր-  
ջին դործը՝ «Գարունը մեր բակում» բնանկարը: Դեռ մահէն քսնի մը ժամ  
առաջ նկարիչին վրձինը հպեր էր այս կտաւին: Նկարի ուղիղ կեդրոնին պատ-  
կերուած է խաչքար մը, անոր մօտ՝ սալոք, նստարան: Հեռուն ուրուա-  
զժուած է բարձրախորհ շէնք մը: Ու այս ամէնը, տեղակ մը դրկուած է նո-  
բարողրոջ ծաւերով: Այն ինչ որ կ'երեւի կտաւի վրայ, նորութիւն չէ դիտո-  
ւին համար: Սակայն ծանօթ տեսանելի ներկայացուեր է գունազծային այն-  
պիսի կառուցուածքով, որ կը դրաւէ անմիջապէս, կը հաղորդէ ինչ-որ ան-  
մեկնելի քնարականութիւն մը: Կտաւը կարծես կը ծածանի նրբերանդ դոյնե-  
րու ներդաշնակութեան մէջ: Եւ կը թուի, թէ նկարիչը ազօթք կ'ընէ խորանին  
առջեւ: Խորանը Հայրենիքն է, իսկ ազօթքը՝ անոր ձօնուած երգ մը, որ ան  
հաղորդեր է արգէն՝ ամբողջ ուժով:

Առաջինը՝ որով իսկոյն կը տպաւորեն Կալենցի կտաւները, գայնն է,  
գունաշխարհը: Մեզ՝ Հայ նկարիչներու զարմանալի չի թուիր այդ աշխար-